

Կ Ե Ա Ն Ք Ի Տ Ե Ս Ի Լ Ը *)

(Համբարձման գիշեր)

Ժողովրդական աւանդութիւն

Ու խօսում է գիշերը ուշ,
Խօսում հաղար ձայներով,
Գետը անսանձ կանչում է «վճռէ»,
Ծառերի մէջ սողում հով.

Նուադում են ծղրիղները,
Գլխին վաճ է տալիս բուն,
Գոռում-գոչում ցածն ու վերը,
Սարում-ձորում ողջն արթուն...

Այստեղ քէֆ է մրկալի,
Ու զուռնան է զիլ ծորում,
Չարքերն անսանձ պար են գալի,
Գորտերն անլուռ կռկռում...

Անթար

Խնչպէս ամենքը ապրում են զուարթ
Նւ ինչ ուրախ են ապրելու համար,
Խնչպէս ամեն ինչ վայրի է, ազատ.
Ողջն քեզ, սփ կեանք դու կեանքի համար...
Ինչ երջանիկ է ճպուռը անդարդ,

*) Տես «Ծուրճ», № 1.

Զքաւոր կկուն իր անշուք ճղնում.
 Աղքատ արքաներ... ապրում են զուարթ
 եւ իրանց բաշխած այս կեանքն են օրհնում...
 Մէկ նայի՛ր այստեղ, ի՞նչ անհունութիւն,
 Ի՞նչ ազատութիւն վայրի ու անսանձ,
 Ի՞նչ աղմուկ, ժխճ, գետերի թնդիւն,
 Որ խառը, ազատ լաւում է հեռուանց:
 Շաշում են, ճշում անսանձ թափերով,
 Բզգում, հըռհըռում ուամիկ ձայներով.
 Ի՞նչ են մարդկային վշտերը թշուառ
 Այս անկարգ, անհոգ խմբերի համար:
 (Անհասին)

Տհւր ինձ մոռացում, անհուն ալեւոր,
 Թող ապրեմ մի ժամ անդարդ ու անդորր,
 Թէ չէ թափ կը տամ այս շղթան կեանքի,
 Կը թափեմ ձեռքիցս թոյները մտքի.
 Ողջն քեզ, նոր կեանք գու. կեանքի համար,
 Ես քեզ եմ գալիս սրտով սեւահար...
 Ազատ ու վայրի,
 Եկ ապրեմ այսպէս...

Անհաս

Թող այդպէս լինի,
 Ապրի՛ր՝ թէ կ'ուզես:

Անքառ

Կոյ կեանք այդպիսի
 Բարձր, անձանձիր...

Անհաս

Ահա նա, լսիր...

Արժիւ (քարճունքից)

Իմ ծնունած օրից ասաց ինձ Աստուած.
«Աշխարքի մարդկանց չըլինես ծառայ»...
Եւ ահա աշխարք ողջ թողի մարդկանց,
Ազատութիւնը ես միայն առայ...

Դէպի լերան իջեան
Գալիս է հիւր ամեն օր
Ամպերի ձիգ քարաւան
Եւ ճամբայ է ընկնում նոր
Ու դնում է լողալով
Հորիզոններն հեռաւոր՝
Արեւելեան աստղերին
Որպէս կարօտ ուխտաւոր:
Այդ ամպերն են ինձ ընկեր
Եւ հողերը դաղթական...

Ա մ պ

Դէպի անյայտն, հեռոն դնանք,
Բարձր, բարձր, դէպի եթէր,
Ամեն սարից բարձր մնանք,
Եւ աշխարքից սուղուենք միշտ վեր...

Ջադու նանին ահա այստեղ
Պրծնելով խմբից դուրս՝
Գունդ ու կծիկ ընկաւ մէջտեղ՝
Սուտ կաղալով կուզէկուզ:

Ջադու (երգում է)

Թռէք ազատ, թռէք այդպէս,
Բարձր, բարձր, դէպի վեր,
Կը տամ մահի շալակն ես ձեզ,
Յետոյ թռէք դէպի վեր.

Բայց ուր թռչէք, թռչել գիտի
 Կարիք-Նանի խնոցին,
 Ոսկի ամպից ցած կը բերի
 Ազատ արծիւ, հալարտ ցին...

Չարհերը (վրայ գալով)

Օհօ, քոռ բու, երգում ես դու,
 Չայնդ անըսպառ, փթած ջադու-

Յ ի ն ը (կսմըթելով)

Բարով, մայրիկ, ոտքդ բարի,
 Ուր 'իր երեկ, բոբիկ խանում:

Ջադու

Քաղաքն էի, էն գիւղն էի,
 էն ծովն էի, այ էն բընում...
 Իմ խնոցին՝ նստած՝ շուտ-շուտ
 Տուի այսօր հազար պտոյտ...
 Հազար մի մարդ «լրկեցի» ես—
 Մէկին թուով, մէկին ջրով,
 Պառաւացրի հազար ու կէս—
 Մէկին բեռով, մէկին բրով...

Մի չարֆ

Աչքդ ճաքի՛, Կարիք-Մայրիկ,
 Ի՞նչ սիրուն ես, իմ անուշիկ...

Ջադու

Հէնց նոր ճամբին մի խենթ ագռաւ

Նայեց դէմքիս, — ընկաւ՝ մեռաւ:
Հն, հն, հն, հն, տես՝ ինչ ունեմ...

Զարօ

— Ի՞նչ է, տեսնեմ:

Ջադու

Պինդ երեսի կաշին է սա,
Ի՞նչ մարդ, ի՞նչ բան, դու շին ասա,—
Եօթը դուռը եօթն օր մուրաց,
Եօթն՝ ու մի օր չըտեսաւ հաց:

Զարքեր

Վնյ, ի՞նչ լաւն է, տեսէք, տեսէք,
Տնւր, մայրիկ ջան, քիչ-քիչ ծամենք...

Ջադու

Գըրճղս կը տամ, որ մահս ծամէք,
Էհէ... Հը՛ը՛մ...

(Երգում է)

Այստեղ պուպուկ, այնտեղ պուպուկ,
Ով պատահի — կը տամ մի կուկ,
Ջահիլ մարդուն՝ պառաւուրթիւն,
Պառաւին էլ՝ քնիցր մի զբուն...

Ողջոյն քեզ, վարպետ Անհաս.

Անհաս

Հը՛, ի՞նչդ է պակաս:

Զադու

Հեւր ու կըրակ, թոյն ու արճիճ,
Սև՝ գոլորշի — ուրիշ ոչինչ...

Անհաս

Ա՛ռ, վերցըրո՛ւ՝ ինչ կամենաս:

Զադու

Ա՛յ շատ ու շատ շնորհակալ եմ,
Շնորհակալ եմ, առանտ մնաս:

(Մօտենալով Անթարին)

Բարե՛վ, Անթա՛նր, չարքի բարով —
Կէսը բարով, կէսը չարով...

Կ'ուզե՞ս սիրտը աղքատ հարսի
(Սրտաճաքի, ով, սուտ ասի):

Եթէ կ'ուզես՝ տո՛ւր մի դըրամ,
Երթամ, խօսեմ, բերեմ նըրան...

Չարքեր (ծիծաղից թուլանալով)

Վայ, աչքդ ճաքի՛, վայ, ի՛նչ լաւ ասիր,
Խնոցի հեծնո՛ղ, Գըրողի՛ գզեր:

Անթար

Կորիւր, քաւթան, ի՛նչ ես կաշում,
Գնա՛, ես քեզ չեմ ճանաչում...

Զադու

Կը ճանաչե՛ս, կը ճանաչե՛ս,

Դեռ ըսպասիր, ջահիլ Անթար,
 Երբ որ կ'ապրես ու կը փորձես՝
 Ինչ կայ կեանքում վատ ու վաթար—
 Երբ կը փորձես հացի թոյնը,
 Դառնութիւնը բարեկամի,
 Եւ բարութեան ստութիւնը,
 Փորոգութիւնն ընկերների...
 Հը՛ր՛մ...

Անթար

Մի՛ մըռմըռա, մի՛, սե շան պէս
 Մի՛ մըռմըռա, թէ՛ չէ՛ կ'ուտես...

Ջադու (խօսքը փոխելով)

Հը՛մ, հասկանում է Կարիք-Մայրիկը,
 Լաւ է հասկանում սրտիդ խնդիրքը.—
 Բեղըդ թիլ-թիլ, կուռըդ ամհւր,
 Սիրտդ գարճն, վարքդ մաքհւր,—
 Գիտեմ, կ'ուզես կեանք ու վայելք,
 Հոգ մի արա, այդ կը ճարենք...
 Զհւ, ջհւ, ջհւ, ջհւ,
 Եկէք, հարսներ,
 Վարդ աղջիկներ—
 Գրքրուածներ:

Արիք՝ վառենք շուտով խարոյկ,
 Դռներ վըրան ոսկէ կաթսան,
 Տանք Անթարին այսօր խնջոյք—
 Նա մեր հիւրն է, ազիզ փեսան:
 Բերէք, հարսներ, կեանքի համեմ,
 Այսօր վայելք պիտի եփեմ...
 Դէ, անուշով Սաթայէլի,
 Իշխանութեամբ Ուրիէլի,
 Կտրուկ խօսքով Կարիք-Նանի

Հրրաման եմ տալիս ես ձեզ.—
 Շնորհ, բիւրաւով ձեր վերքերից,
 Մեռնողների անէծքներից,
 Աղքատութեան մռայլ երկրից,
 Ելէք, բոցեր, յայտնուեցէք:

—
 Յոլաց յանկարծ մի մեծ հընոց,
 Օգը լափեց բոցէ լեզուն,
 Ելաւ կրրակն՝ ինչպէս մի օձ՝
 Ոլոր-մոլոր ու ազազուն,
 Խառնեց կաթսան Կարիք-Մայրին
 Ու ըսկսեց երգել մի երգ.
 «Խնչ են ասում այս կերակրին.
 Սըրան կ'ասեն՝ «այլքեզ վայելք».
 Կերան ազգերն այս կերակուր,
 Ու չըբացան՝ չըգիտեմ ուր...
 Ելէք, բոցեր, փռփռացէք,
 Որ Անթարի վայելքն եփենք,
 Եփենք նախանձ ու նախատինք,
 Եփենք դառը մաղձ ու քրտինք:
 Դէ, աղջիկներ, լաւ խառնեցէք,
 Դէ, ժիր հարսներ, լաւ շաղուեցէք»:

—
 Ու խեղդում էր սե գոլորշին
 Օգը տօթ ու գիշերուան,
 Պտտում էր նըրա չորս դին
 Կարիք-Մայրիկն անատամ:

Ջադու

Եկան մի օր Ախտն ու Յաւեր,
 Եկաւ Սովը աշխարհաւեր,
 Ասին՝ եկ, Կարիք-Մայրիկ,
 Ե՛կ՝ սարքենք մեծ հարսանիք...

Ու սարքեցին ուրախութիւն,
 Սարքեցին մահ ու արհաւիրք
 Ու խառնեցին կեանքին սև թոյն,
 Ասին՝ երգիր, Կարիք-Մայրիկ...

Ելաւ անդադ գլխի վրայ,
 Ժողովուրդ՝ ժողովուրդի.
 Ու երգեց Կարիք-Մայրիկ...
 Ի՞նչ երգեց Կարիք-Մայրիկ.

«Տեսէք, տեսէք՝ այն չոր դաշտում
 Դեռ ապրում է մուկը նիհար.
 Վերջին ծեղն է իր բերանում,
 Շուտով կ'լինի նա ցրտահար:
 Տեսէք՝ ինչպէ՞ս նա վստովստում,
 Վստովստում է ու հետն ասում.
 «Օ՛հ, Կարի՛ք, Կարի՛ք, Կարի՛ք,
 Ամենազօր Կարիք»...
 Դէ, աղջիկներ, լաւ խառնեցէք,
 Դէ, ժիր հարսներ, լաւ շաղուեցէք...
 Խառնէ՛ք առատ սև՝ ու ժանտախտ,
 Փո՛ւշ ու տատասկ, մահ-տարածամ,
 Թո՛յն ու պալար, սո՛ւղ յուսահատ,
 Դեղին դո՛յնը հիւանդութեան...»

Չարներ

Էլ ի՞նչ ունիս:

Ջադո

Բոց ու անէծք:

Զարֆեր

Ո՞ւմ ես տալիս:

Ջադու

Ով պատահեց:

—

Ու խեղդում էր սև գոլորշին
Օդը աճթ ու դիչերուն,
Պտուտում էր նըրա չորս դին
Կարիք-Մայրիկն անատամ...

Զարֆեր

Սիրտդ ճաքի, անհւշ մայրիկ,
Հազար ճիպոտ քեզ չէ հերիք.
Ապրե՛ս, ապրե՛ս,
Հազար անգամ ապրես—մեռնես:

Ու ձայներով ճիւղաղային՝
Հարայ—հըրոց բարձրացըրին,
Թռան դէս-դէն, եկան նորից՝
Կշկշալով ամեն կողմից
Ու ձեռ ձեռի իսկոյններթ
Պար բռնեցին մի անհերթերթ:

Ջադու (լննթարին)

Ահա, Կարիք մեծ-մայրիկից
Դեղ մի պարզեւ կախարդային.
Ըմպիր, եղբայր, այս բաժակից,
Որից շատերն ընդունեցին...
Դու ցանկացար կեանք ու վայելք—

Դէ՛, նախ ըմպիր, այս ջուրն անուշ,
Խեղճ տանտիկնոջ սիրտը շահիր,
Որ ըստանաւ սրտեր քնքուշ:

Անքաւ (խմում է եւ զզւում)

Թի՛ւհ, ճաքեա, ջադու,
Գիտինն անցնես դու...

Անիծեալ կարիք, ատելի բուէճ...
Աւաղ, ըմպեցի թոյներդ բոլոր...
Ջահիլութիւնըս թառամեց իմ մէջ,
Այնքան դառն էր նա, այնքան թունաւոր...

«Հա՛ հա՛, հա՛, հա՛,» քահ-քահ խնդաց
Կարիք-Մայրիկն ուրախացած
Ու խառնելով նորից կաթսան՝
Սուր ծղրտաց ուրախաձայն.

«Ելէք, բոցեր, եկէք այստեղ,
Եկէք նոր-նոր կծիկներով,
Եկէք, կաղմէ՛ք ձեր խումբն ահեղ՝
Վշտի բոլոր անուններով»

XXII

Անքաւ

Ա՛խ, ի՜նչ դաժան, ա՛խ, ի՜նչ յիմար,
Ա՛խ, ի՜նչ դառն է կեանքն ու աշխարհ...

Յանկարծ սուլելով չար հողմի նըման,
Լափելով անյագ ոսկեվառ կաթսան,
Ճեղքելով բոցը՝ դուրս ելաւ իսկոյն
Մի խիստ ուրուական, դաժան ու դժգոյն...

Ուրուական

Ե՛ս եմ Ախը, ես եմ վախը,
 ես վաճն եմ սև, ես վիճն ահեղ...
 Ասա՝ ինչո՞ւ կանչեցիր...

Անթառ

Սոսկալի ես, խափանուիր...

Այս

Յայտնըում եմ ամեն հեղ
 երբ մարդիկ են ինձ կանչում,
 Անունս հնչում է այնտեղ,
 Ուր էակն է հառաչում:

Գիտէ անունս ամեն ոք—
 Թէ՛ նորածինն նորընկեց,
 Որ ասում է՝ «վա՛յ, ընկա՛յ»,
 Եւ Թէ՛ ծերը մահամերձ:

Եւ դո՛ւ էիր, թուլամարդ,
 Որ բաւիղում այս կեանքի
 Գնում էիր վի՛ս, հրպարտ
 Դէմը մաշող Կարիքի:

Ես եմ վիշտը դարերի,
 Կործանողը մշտական,
 Ես ոգին եմ խաւարի,
 Հառաչների չար վկան:

Ես մտրակն եմ դիւթական,
 Որ քշում է դէպ նոր կեանք:

Թոյն եմ դարձնում ես ներկան,
Գալիքն է իմ նպատակ։

Անշարժութեան փթում տուող,
Թոյլին մահուան դուռը տանող,
Անդութ, ըմբստ ու բանսարկու,
Նոր—անյայտում միշտ խուզարկու
Ոգին եմ ես.

Մինչև այսօր ու յաւիտեան
Անհաւասար, անմիաբան,
Հոգիներով միշտ մենակեաց,
Չըհասկացող իրար՝ մարդկանց
Տանջանքն եմ ես.

Տառապանքն եմ աշխարհաւեր,
Որ բնութեան հնոցներում
Այս ու այն կողմ միշտ վար ու վեր
Մըրկում եմ, գանահարում...

Ես ինքնիշխան, ես թագաւոր,
Ես անընտրող, անխղճմտանք,
Միշտ գործում եմ գործ ահաւոր,—
Սակայն կեանքն է իմ նպատակ...
(Անյայտանում է)։

XXIII

Ջադու

Ժամս հասաւ, պիտի գնամ,
Որ տամ հազարմէկ մանէման,
Բերէք, հեծնեմ իմ քամի ձին,
Գնամ, կորչեմ ինչպէս մի ցին։

Անթար

Գնա՛, դայեակ տառապանքի,
 Գնա՛, քոնն է աշխարհն անբախտ.
 Տար ամեն տեղ վիշտը կեանքի,
 Խրախճանիր այդպէս ազատ:

Հեճաւ ջաղուն իր խնոցին,
 Խփեց նրան օձէ մտրակ,
 Գնաց, կորաւ ինքն ու իր ձին,
 Ընկաւ նորից աշխարքի տակ:
 Մնաց միայն կրակն անմար,
 Որ փլփլում աղբիւրի մօտ՝
 Նուաղում էր մէկ մարէմար,
 Մէկ էլ յանկարծ ելնում էր օդ:

Անթար

Գնա՛ այդպէս աչքիցս անտես,
 Գնա՛, հիմայ հասկացայ քեզ.
 Դու այս գիշեր ահաւորից
 Ահաւորը ցոյց տուիր ինձ...

Ու բազմեց չորս դին խորին լուութիւն:

XXIV

Գործեր

Եկէ՛ք, եկէ՛ք, քեռիներ,
 Այստեղ գորդ ենք գտել մենք,
 Կանաչազգեստ սիրունիկներ,
 Ծանրագոգոթ սանամէրներ,

Համեցէ՛ք, եկէ՛ք բազմենք
Ու մի սիրուն երգ ասենք...

Անքառ

Ի՞նչ են խանգարում երգերով յիմար՝
Խաղաղութիւնը մեր այս վշտալի,
Որ ծաւալուած է լուկ սուգի համար...
Է՛հ, սուգ է կեանքը, ոչինչ աւելի...
Եւ այս գեղեցիկ աշխարհի միջին
Մահից գեղեցիկ էլ ոչինչ չըկայ,—
Հալուէս ու դառնան մի փոշի չնչին,
Թո՛ղ կեանքն անտարբեր միշտ գնայ ու գնայ...

Մի գործ

Բայց լսեցէք, ճահճիցն ահա
Ձայնն է դալիս մեր մայրիկի,
Երկունքի մէջ տնքում է նա,
Վախենում եմ ցաւից ճաքի:

Երկրորդը

Քէֆի՛դ նայիր, նա միշտ՝ եղբայր՝
Համ կը տնքայ, համ կը խնդայ,
Համ էլ իր նոր ճուտի համար
Տեղ բաց կ'անի գորգի վրայ...

Մի ուրիշը (երգում է)

Ա՛յ Ի՛նչ-պէ՛ս
Սիւրում-մ եմ,
Այս ճիւճուն
Նաղաճեմ...

Մօսիւնը

Անհւշ, եղբայր, անո՞ւշ արա,
Մինն էլ իմ ճանկա ընկաւ ահա...

Միւնը (հետուից)

Օ՛, լսել եմ մի ժամանակ
Հանճարեղ, մեծ Կանանչին—
Բարձրանում էր երեք ութնեակ՝
Ահագին ձորի միջին...

Մի ուրիշը (ծիծաղելով)

Այո՛, երգչին այն ժամանակ
Ծափում էինք, երբ անհաշիւ
Բարձրացրե՛ց երեք ութնեակ
Արագիւր մեծապատիւ...

Բոյոտը

Հա, հա, հա, հա,
Հէ, հէ, հէ, հէ,
Ճաքես դու, լի՛րբ...

Անքաւ

Յիմա՛ր ժխոր ու խծբժանք,
Թի՛ւհ, և սրան ասում են կեա՛նք...
Ջրուե՛ս, չրլինե՛ս, տանջանքի՛ աշխարհ,
Վշտերի՛ մանուկ, անխնա՛մ, անմա՛յր,
Մ՛ե լինէր էրնէկ օրը՜ ըստեղծման,
Չը բերէ՛ր մայրդ որբին քեզ նման...

Անհառ

Ափսո՛ս, որ մարդու անհամբեր հոգին
 Միշտ կոյր է վշտի բեռների տակին.
 Լսում ես—ափսո՛ս, բայց չես իմանում,
 Նայում ես—իզո՛ւր, սակայն չես տեսնում:

Անթառ

Թո՛ղ, Թո՛ղ, մի խօսիր, անբա՛խտ իմ երազ,
 Իզուր է կեանքը, ցնորքներն անհաս,
 Քանի որ չքեղ այս այգու միջում
 Կարիքն ու վիշտն են անարգել աճում...

Գեօրգի (Անթարին)

Արտասո՛ւք ես դու ինձ տալիս,
 Տո՛ւր այդ՝ ծոցս կը պահեմ.
 Բայց, իմ մանուկ, զո՛ւր ես լալիս,
 Կա՛րճ է կեանքը ժպտադէմ...
 Քեզ պէս բանի՛ն լացի՛ն, լացի՛ն
 Ու իմ գրկում մտան քուն.
 Է՛, խաղաղուիր, լաց մի լինիր,
 Միայն ծաղկիր, ապրի՛ր դուն...

Ու գիշերը հազար ձայնով
 Գրկած նրան՝ խօսում էր,
 Երազների քնքոյշ թևով
 Նրան թռցրած տանում էր...

XXV

Ծաղիկները

Եկէ՛ք այստեղ, այ քուրիկներ,
 Տեսէ՛ք՝ հնց մի խղճալի
 Դուլսը կախ՝ հոնգո՛ւր-հոնգո՛ւր
 Լաց է լինում սրտալի:
 Արի՛ք այստեղ, այ քուրիկներ,
 Մխիթարենք թշուառին,
 Թէ եար ունի՝ տանենք սրան,
 Շուտ հասցընենք իր եարին...

Միևը

Տեսէ՛ք՝ որքա՛ն գունատ է, խեղճ,
 Մարել է կեանքն աչքերի մէջ...

Երկրորդը

Կարիք մեծ-մօր թոյնից խմեց—
 Ահա ինչու նա գունատուեց:

Բոլորը

Մենք միշտ երգում, բան ենք ասում,
 Ձի հասկանում մեզ ոչ ոք,
 Որ կը սրբենք ողջ աշխարհից
 Բոլոր տանջանքն ու մորմուկ...

Մենք խօսում ենք պարզ խօսքերով՝
 «Արի, վերջ տանք վշտերիդ»,
 Բայց բի՛ւր մարդիկ մեր կողմերով
 Անց են կենում սև, անսիրտ...

(Անթարին)

Արի մեզ մօտ, ապրիր դու պարզ,
 Ո՛չ իմացիր, ո՛չ դառնանաս...
 Թող հովը դայ՝ սրտիդ դիպչի,
 Բուրե՛ աչքիդ անո՛ւշ երազ...

Վարդ

Ե՛կ, անհոգ ապրիր, անհոգ էլ դնա՛
 Ինչպէս ամեն ինչ աշխարքիս վրայ...
 Ոչ կեանքի բարիքն արա դու անտես,
 Ոչ մահու տեսքից սարսափիր այդպէս:

Լսում էր Անթարն հանդիստ ու անդորր,
 Մինչև որ անո՛ւշ նիրհ եկաւ վրան.
 Մեռա՛ն ձայները, հանդարտուեց բոլոր,
 Հալուեցին չարքերն հնչիւնի նման:

Եւ ահա աչքին կէս արթուն, կէս քուն՝
 Եկաւ մի տեսել վսե՛մ ու դժդոյն...

XXVI

ԻՆՏԵՐՄԵՑԻՆ

Կէս գիշերին, մէջ գիշերին
 Եկաւ ափը Աղբիւրի՝
 Լուսաթաթախ՝ ձիւնի նման՝
 Սևագանգուր մի փէրի:

Եկաւ, նստեց մամուռ քարին,
 Ծամերն առատ թողեց ցած,
 Զրի ծոցում կուրծքը նարին
 Ինչպէս լուսին ցոլցըլաց:

Խլեց Աղբիւրն այն սիրահար
 Նրա շուքը դողալով,
 Շաղկեց վրան լալ ու գոհար
 Ու մարգարիտ քրքշալով:

Եւ նա արագ, շնորհալի՝
 Սանրեց ծամը վեր ու վար,
 Ատողի՛ նման շողք էր տալի
 Նրա սանրը ոսկեվառ...

Սանրում՝ էր նա ու հետն երգում
 Յաւերժութեան երգերից,
 Ակն-Աղբիւրն էլ երգը կրկնում՝
 Քրքշում էր բերկրանքից.

«Մեռնո՛ւմ է կանանչ, թռչնում է գարո՛ւն,
 Դեղնո՛ւմ է հովտի ծածկոցը սիրուն,
 Գահավէժ ընկնում, արծիւն իր գահից—
 Ոչինչ այս երկրում չի պրծնում մահից,
 Բայց մահ չըկայ ինձ համար,
 Ես անցնում եմ դարէդար...»

Երկա՛ր-երկա՛ր հնչում էր դեռ
 Երգի ալիքն այն հովտում,
 Հեռո՛ւ-հեռո՛ւ դողգողում էր
 Նրա զողանջն ըզգայուն...

Անթառ

Ա՛խ, երանի՛ գիտենայի
 Ո՞ր լոյսիցն է սա հիւսուել,
 Ասած, ծերուկ, անի, մի՛ պահի,
 Ո՞վ է կոյսը այս նազել:

ԱՅԽԱՍ

Եթէ կ'ուզես՝ կեանքն է սա,
Կին է սըրա անունը...

—

Եւ տեսիլը այն բաղցրալից
Օրօրուում էր դեռ հանդարտ,
Եւ չարքերը այնտեղ նորից
Պարում էին ժիր, զուարթ:

Խաղում էին, կանչում հարա՛յ՝
Բռնած մի պար գեղեցիկ,
Թռչում էին, ասում օխա՛յ,
Երգո՛ւմ ուրախ հարսնա-աղջիկ.

«Արի, Անթա՛ր, բեզ պըսակենք
Այս գեղեցիկ փէրու վրայ,
Արի, մենք բեզ տուն-տեղ անենք,
Դու ունեցիր սիրուն տղայ...»

Սիրուն տղան կ'ապրի քո տեղ,
Կ'երգէ՛ ջահիլ մարգի վրայ,
Երբ դու յաւէտ քնես այստեղ,
Երբ որ անո՛ւշ կեանքդ գնայ...»

Ու Անթարին պըսակեցին
Այն լուսեղէն փէրու հետ,
Դրին գլխին ծաղկէ պսակ,
Փռեցին դորդ ծաղկաւէտ,

Փաթաթեցին տերեւերով
Անթարին ու իր փէրուն.
Եկա՛ւ այնտեղ բաղցր մի հով,
Երգեց մի երգ ոլորուն:

Չարֆերդ (երգում են)

Է՛յ, էրնէ՛կ քո էրնէկին,
Որ քեզ փէրին եղաւ կին.
Քեզ տերւը հովանի,
Հովը միտքդ կը տանի...
Օխա՛յ, օխա՛յ, ի՛նչ անուշ
Պիտի բնես դու մուշ-մուշ:

Անթար

Խոտն ու մամուռ անկողին,
Հուանի շողքը ինձ վերմակ,
Աստղերը ջահ իմ գլխին,
Սարն ու դաշտը ինձ սենեակ.
Օխա՛յ օխա՛յ, սէրն անո՛ւշ,
Համբոյրն անո՛ւշ, կեանքն անո՛ւշ...

«Հը՞, այստեղ եմ, ի՛նչ ես ուզում,
Չայն տուիր այս աշխարհից»...
Մի ուրուական՝ տուաւ հարցում
Դուրս լողալով աղբիւրից:
— «Ո՞վ ես, ոգի, ո՞վ կանչեց քեզ»,
Անթարն ասաց, խնդադին.
«Այդ քո ասած «Օխայն» եմ ես»,
Պատասխանեց այն ոգին.
«Վայելիր կեանքդ, ո՞վ հողածին,
Քանի ոչ չէ չքացել
Այս վայրկեանը վա՛ռ, խնդադին,
Դառել անցեալ անկրկնել:
Ես այս երկրի բերկրութիւնն եմ,
Եւ երազը վաղանցուկ,
Ուրախացիր, թէ չէ՛ կ'անցնեմ,
Դարձեալ կ'ապրես դու անշուք»...

Ես այնտեղ եմ, ուր նոր մանկան
 Լուում է լացն առաջին,
 Երևում եմ մի կարճ վայրկեան
 Ես նրա մօր աչքերին:
 Ինձ է պտրում ամբողջ աշխարհ
 Անյաղթելի յոյսերով,
 Ես պահում եմ շունչն ու այս կեանք
 Ապագայի ձայներով...

(Անյայտանում է)

Ասուր (ընկնելով)

Ձուարթ ու խոր կեանքի համար
 Վայրկեանն էլ է բաւական,
 Որ դայ թափով մի բոցավառ,
 Վառի երազ դիւթական...

Միս (յայտնուելով կրկին)

Հարադատներ մի անյայտ մօր՝
 Մենք եղբայր ենք դարաւոր.
 Նա է ես, ես եմ նա,
 Եւ մեր գործն է—կեանք ու մահ...
 Ինձ կոչեցին մարդիկ տանջանք,—
 Բայց ծնում եմ ես միշտ կեանք.
 Եւ ինձ բերկրանքն անիծելով
 Առնում է կեանքն իմ ձեռից,
 Եւ վայելքում այդ հիւծելով
 Միշտ յանձնում է վերջը ինձ.
 Կեանք եմ տալիս ես նրան,
 Նա էլ ինձ, ու ես մահուան,
 Կեանք, որ ինչպէս խաղ ու պար
 Փոխ ենք տալիս մենք իրար...

(Անյայտանում է)

Յրուեց յանկարծ մի սուր ծիծաղ
 Այն հովտի երեսին,
 Եւ չարքերը ուրախ-ուրախ
 Ծափ տուին միասին:

XXVI

Անտառի մայրը

Է՛յ, լսեցէք, ձեզ եմ ասում,
 Հէքիաթ ասող կաղնիներ,
 Լսէք, հպա՛րտ բարդիներ,
 Դհւք էլ, սգւո՛ր նոճիներ,
 Գիշեր անցաւ—բուն եղէք:
 Լաւ փաթաթուեցէք, ցուրտ պէտք է լինի,
 Տեսէ՛ք՝ որ քամին հագուստ չըտանի:

Լուսնակի շոյրը

Բլուրն է թաւի՛շ, ծաղկունքը քնքո՛ւշ,
 Անքուն հովերի սրինգն է անուշ...
 Ինչքա՞ն սիրուն է այս գործը հիմայ,
 Կը ննջե՛մ հանգիստ ես նրա վրայ...

Անհաս

Նայի՛ր, բարեկամ, ինչպէ՛ս այն բլրին
 Լուսնի ծածկոցը գցած գլխներին՝
 Ննջե՛լ են բոլոր ծաղկունքը մուշ-մուշ՝
 Անքուն հովերի սրինգովն անուշ...
 Ննջե՛լ է արօտ, ննջե՛լ է նոճին,
 Ոտնուծոց արեւ բլուրներն հեռուն,
 Հանգի՛ստ են հիմայ հսկան ու ճճին,
 Երազում թաղուած խնդում է առուն:
 Գիշեր է անցնում: Եւ ծերուկն արդէն

Կծկում է քանդած գիշերը նորից,
Խռով լուսնակը անցել է մեր դէմ,
Ոտքերն է մեկնում ստուէրը բլրից:

Մշուշը (սողալով քարափից)

Հանգիստ է հովտում,
Դէ՛, եկ, կամացուկ այն քերծից իջնենք,
Եւ կանուխ առտուն
Դէպի սարերը հանգիստ կը մեկնենք:
Երկար-երկար թնդում էր
Երգ ու ու պարը չարքերի,
Քնած հովտում աղմկում էր
Հարսանիքը Անթարի:

Սակայն ահա զարթնեց մի հով,
Մարեց երազն իր նուրբ թևով:
Ու երբ դողդոջ պարզ նորածնի
Աղօտ աչքովն անժըպիտ
Նայեց չորս դին հըրաշալի
Բարի լոյսը միամիտ,
Ու կըտուցներն հաւքերը երբ
Թևի տակից հանեցին,—
Ականատեան այն տեսիլի
Քընած էր խոր լուսանցին...

ԴԵՐՆԵՆԻԿ ԴԵՄԻՐՉԵԱՆ